ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Նալբանդյան 57. հեռ 52-93-38

«15» 08 2017թ.

№ 12/795

<<Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ>> ՀԿ նախագահ

Ա.Սաքունցին

Ք.Վանաձոր, Տիգրան Մեծի պող. 59

Հարգելի՛ պարոն Սաքունց,

ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրած <<17.07.2017թ.>> թվագրմամբ Ձեր թիվ Ե/2017-17.07/592 դիմումը ստացվել և քննարկվել է ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում:

Պարզվել է, որ ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչության 2016թ. օգոստոսի 26-ի թիվ 3/8068 գրությունը վերաբերվում է նույն վարչության ստորաբաժանումների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ չանցկացնելուն, քանի որ ՀՀ ոստիկանության այլ ստորաբաժանումների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման վերաբերյալ հաշվառում ՔՀԳ վարչությունում չի տարվում:

Ինչ վերաբերում է դիմումում նշված՝ Մ.Պողոսյանի նկատմամբ <<Ներքին դիտում>> օ/հ միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու մասին որոշման ապօրինի լինելուն, ապա հարկ է նշել, որ <<Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ կետում նշված՝ <<կասկածվում է>> եզրույթի մեկնաբանմամբ ակնհայտ է, որ այն նույնական չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված <<կասկածյալ>> /որպես դատավարական կարգավիճակ/ եզրույթի հետ: Մասնավորապես՝ <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Հարգանքով՝

Պետ,
ոստիկանության գնդապետ՝ ***Ա.Վ.Հակոբյան***

Կապ.Մ.Նահապետյան
Հեռ. 010-59-63-36